

ԳՈՐԻՍԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

/ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ/

«Սյունիքի մարզ ք.Գորիս Մաշտոցի 3 հեռ.(094)815052 e-mail info_goris@aarhus.am, nver.goris@gmail.com»

Ե N-001/14

«Բնապահպանության նախարար պարոն
Արամ Հարությունյանին
Գորիսի Օրհուս կենտրոնի համակարգող
Նվեր Պողոսյանից»

4 փետրվարի 2014թ.

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Նախարար.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, խնդրում եմ Ձեզ, Գորիսի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 2014 թվականի ընթացքում, Սյունիքի մարզում, բնապահպանության նախարարության կողմից՝ պլանով հաստատված, իրականացվելիք գործողությունների, ծրագրերի /խնդրում եմ ուղարկել ցանկը/
2. Կատարման ժամանակացույցերի ու կատարողների
3. Իրականացվելիք ծրագրերի բյուջեների
4. Ծրագրերի իրագործումից ակնկալվող վերջնական արդյունքների:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության/30 օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Գորիսի Օրհուս կենտրոնի համակարգող



Նվեր Պողոսյան